Telcell®

ք. Երևան, 01 Հոկտեմբերի **2022թ.**
Ելից՝ 1190

HETQ.am-ի լրագրող Տիրայր Մուրադյանին

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք.

1. «Թել-Սել» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) արդեն 15 տարի ծավալում է բաց, թափանցիկ և հաշվետու գործունեություն: Ընկերության ավելի քան 4500 տերմինալների ցանցը սպասարկում է Հայաստանի Հանրապետության և Արցախի ողջ տարածքը: Ընկերությունը գործել և գործում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և ընթացակարգերին համապատասխան, այդ թվում՝ համայնքների հետ համաձայնեցմամբ:

2. Ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ մարզային համայնքներում Ընկերության վճարումների ընդունման տերմինալները համապատասխան վայրերում տեղադրվում են օրենսդրական կարգավորումներին ու պահանջներին համապատասխան: Ինչ վերաբերում է համայնքին վճարվող գումարի մասին հարցմանը, նշենք, որ այն առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվություն է, ուստի՝ Ընկերությունն իրավասու չէ հրապարակել նման տվյալներ:

3. Ընկերության 4500 տերմինալներից 2100-ը գործում են Երևանում, մնացածը՝ Հայաստանի Հանրապետության մարզերում և Արցախում: Ընկերությունը գովազդային ծառայություն չի մատուցում, իսկ Ընկերության գովազդային մակերեսների համար վճարում է օրենսդրությամբ սահմանված տեղական տուրքը:

Հարգանքով՝
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Համբարձում Դանիելյան

Կատարող՝ Արփինե Ավետիսյան
(+374) (94) 160069